ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համար

ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ

Բազմաչափ աղքատության ազգային ինդեքսը (ԲՄԻ) երկրում աղքատությունը չափելու գործիք է, որը հարմարեցված է տարբեր երկրների յուրահատկություններին՝ կառուցված «Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության» մեթոդաբանության վրա: Այս ինդեքսն այլընտրանք է աղքատությունը չափելու ավանդական մոտեցմանը, որում աղքատությունը դիտարկվում է զուտ դրամական տեսանկյունից:Փոխարենը՝ աղքատությունը 5 չափականությունների տեսանկյունից դիտարկելը, ներառյալ՝ (1) հիմնարար կարիքներ, (2) բնակարանային պայմաններ, (3) կրթություն, (4) աշխատաշուկա, (5) առողջապահություն, թույլ է տալիս այն ըմբռնել առավել համապարփակ կերպով և լոկալ համատեքստի շրջանակներում:

Այս քաղաքականության առաջարկում ամփոփված են մի քանի հիմնական տվյալներ այն ցուցանիշների նկարագրական վերլուծությունից, որոնց դեպքում զրկանք կրելու մակարդակը Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության շրջանում կազմել է առնվազն 50%: Այս տվյալներին հաջորդում են քաղաքականության բարելավման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջարկներ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ ներկայացված բովանդակությունը ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի պատասխանատվությունն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԲԱԻ ոլորտներն՝ ըստ ցուցանիշների

Ընտրված 24 ցուցանիշների շարքում աղքատության մակարդակն ամենաբարձրն է արժանապատիվ կյանք, առողջ ջեռուցում, աշխատաշուկայի մասնակցություն և արժանապատիվ աշխատատեղ ցուցանիշների համար: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը բոլոր երեք մարզերով.*



Միջնակարգ կրթություն

Միջնակարգ կրթության ցուցանիշը բացահայտում է այն ՏՏ-ները, որոնց որևէ անդամ, ով 15 տարեկան է կամ ավելի մեծ, չունի միջնակարգ կրթություն: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Կրթական հաստատություն պարտադիր հաճախում

Կրթական հաստատություն պարտադիր հաճախում ցուցանիշը մատնանշել է այն SS-ները, որոնք ունեցել են պարտադիր դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա (6-17 տարեկան), որը դպրոց չի հաճախել: Այդ տարիքի երեխա չունեցող SS-ներն զրկանք կրող չեն համարվել: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Կրթական ծառայությունների որակ

Այս ցուցանիշը բացահայտում է այն SS-ները, որոնք բավարարված չեն կրթական համակարգով: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Կրթության հասանելիություն

Կրթության հասանելիության ցուցանիշը վերաբերում է այն SS-ներին, որոնք չեն ունեցել կրթական ծառայություններին համապատասխան հասանելիություն: Եթե մանկապարտեզ, տարրական կամ միջնակարգ դպրոց հաճախելու համար որևէ երեխա ծախսում է ավելի քան 30 րոպե քայլելու կամ հեծանիվ վարելու համար, ապա տվյալ SS-ն համարվել է զրկանք կրող: SS-նե-րը համարվել են զրկանք կրող նաև այն դեպքում, երբ որևէ երեխա մեկ ժամից ավելի է ծախսել տրանսպորտի այլ միջոցներով դպրոց գնալու համար: Քաղաքային SS-ներին այս հարցը չի տրվել և վերջիններս չեն համարվել զրկանք կրող: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հաշվի առնելով, որ կրթությունն այն ոլորտն է, որի մասով արձանագրվել են նվազագույն զրկանքները՝ Նախարարության աշխատանքների հիմնական ուղղությունը պետք է լինի Առողջապահության նախարարության հետ համագործակցությունը: Այդպիսի համագործակցության հիմքերը ներկայացվում են հաջորդիվ:

Առողջ սննդի սպառում

Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում աղքատության վերաբերյալ մեր վերլուծությունը փաստում է այս մարզերում առողջ սննդի սպառման տեսանկյունից զրկվածության առնվազն 50%-ի մասին: Բնակչությանը տրվել է հետևյալ հետևյալ հարցը՝ *«Նախորդ 12 ամիսների ընթացքում գումարի կամ այլ միջոցների բացակայության պատճառով եղե՞լ է այնպիսի պահ, երբ Դուք կամ Ձեր ընտանիքի մյուս անդամները զգան հետևյալ պնդումներից որևէ մեկը»: Եթե հարցվողը պատասխանել է* ***ԱՅՈ*** *կետերից առնվազն մեկի համար, («անհանգստացել եք բավարար ուտելիք չունենալու համար», «ի վիճակի չեք եղել առողջ և սննդարար սնունդ ուտել», «միայն մի քանի տեսակի սննդամթերք եք կերել», «ստիպված եք եղել բաց թողնել ճաշը», «ավելի քիչ եք սնվել, քան կուզեիք», «անհանգստացել եք, որ ուտելիքը սպառվել է», «քաղցած եք եղել, սակայն չեք սնվել», «մի ամբողջ օր չեք սնվել»),* ապա տնային տնտեսությունը դիտարկվել է որպես զրկանք կրած:

Առողջ սնվելու առումով զրկվածության ամենաբարձր շեմը գրանցվել է Շիրակում՝ մարզային մակարդակով, և Սպիտակում ու Շիրակի գյուղերում համայնքային մակարդակով:



Առաջարկվող քայլեր՝ հասցեագրելու առողջ սննդի սպառման հիմնախնդիրը

Որտեղ.

Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Տավուշի քաղաքային համայնքներ, Գյումրի,Վանաձոր, Սպիտակ, Իջևան

Ինչ (կարճաժամկետ և միջնաժամկետ).

1. Սուբսիդավորել սննդի հասանելիությունը մանկապարտեզներում և տրամադրել բյուջե դպրոցներին՝ երեխաների սննդարար պարեն ստանալն ապահովելու համար: Սա նաև կարող է նպաստել համայնքների ներսում առողջ սննդային սովորությունների վերաբերյալ իրազեկվածությանը:
2. Դպրոցականներին կրթել առողջ սննդային սովորությունների վերաբերյալ:
3. Դպրոցներում/մանկապարտեզներում նախաձեռնել համայնքային այգեգործություն՝ դրանց կարևորության վերաբերյալ իրազեկման արշավներին զուգահեռ: Սա կարող է լավ միջոց լինել համայնքային ծրագրերը դիվերսիֆիկացնելու համար (օրինակ՝ հանրային-մասնավոր համագործակցության միջոցով):

Ինչ (երկարաժամկետ).

Համայնքներին կրթել առողջ սննդային սովորությունների վերաբերյալ՝ ամրապնդելով և ընդլայնելով արդեն գոյություն ունեցող առողջ սնվելու ծրագրերը: